

Ն.ԶԱՐՅԱՆԻ ՀԱԿԱՆԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԵՆՍՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԺԵԶ՝*

Ա.վ. Բալասանյան

1941թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ուխտադրուժ կերպով ներխուժեց Արևմտական Միության: Խորհրդային երկրի կազմի մեջ մտնող ազգերը ոտքի ելան ապստամբելու իրենց ընդհանուր երկիրը: Եղբայրական ժողովուրդների ընտանիքում գնեքի դիմաց նաև հայ ժողովուրդը՝ ռազմաճակատ ուղարկելով իր 600 հազար քաջարի զավակներին, որոնցից 300 հազարը չվերադարձան տուն: Հայ քաջազունների հիշողության մեջ դեռևս թաքմ էին 1915թ-ի արյունոտ ցեղասպանությունը, որ իրականացրել էին երիտթուրքերը՝ Գերմանիայի կանցլեր Վիլհելմ Նրեյդոդի ինսցուրթամբ և թողութությամբ:

Պատերազմի հենց առաջին օրը հնչեց «Ամեն ինչ՝ ռազմաճակատի համար, ամեն ինչ՝ հաղթանակի համար» կոչը: Զինվորագրվեցին ոչ միայն մարդիկ, այլ գրականությունն ու արվեստը: Իր խոսքը պիտի ասեր նաև թատրոնը, և ասաց: Հայ մտավորականների հետ միասին դերասաններ լարեցին իրենց ուժերը, երիտասարդները մեկնեցին ռազմաճակատ, իսկ տարիքն առած արվեստագետները հատուկ բրիգադներ կազմած մեկնում էին ռազմաճակատ՝ զորամասեր, հոսպիտալներ, զինվորական հաճախատեղիներ՝ ասում իրենց ոգևորելու խոսքը և ապա ձեռնամուխ լինում հայրենասիրական պիեսների բեմադրությանը:

Ծանր էր կյանքը, դժվարություններն էլ՝ անթիվ: Ամեն դեպքում չէր մոռացվում թատրոնը, բեմարվեստի զարգացման պահանջը չէր շրջանցվում: Սակայն գոյություն ուներ մի մեծ դժվարություն, որ կապված էր հակաֆաշիստական դրամատուրգիայի բազմակայության հետ: Հայտնի է, որ վտանգի հենց առաջին րոպեներին քանաստեղծները կարող են անմիջապես ստել իրենց մարտական չափածո խոսքը: Սակայն արձակագիրների և դրամատուրգների համար ժամանակ է պետք: Այս անգամ էլ հայ գրողները գտան ելքը: Մտերմվեցին մեկ գործողությամբ պիեսներ, որոնցում ներկայացվում էին ռազմաճակատում մարտնչող ռազմիկների քայազործությունները՝ ֆաշիստական դեղին ժամառիտի դեմ: Իսկ 1941թ. վերջերին բեմադրության ներկայացվեցին առաջին հայրենասիրական դրամատիկական գործերը: Հիշտ է, գեղարվեստական առումով դրանք զերծ չէին թերություններից, սակայն անհրաժեշտ արձագանքն էին պատերազմական ժամանակաշրջանի: Այս առումով հաջողված փորձեր հանդիսացան Գեղամ Սարյանի «Անտառի խորքում», Ալեքսանդր Արաքսմանյանի «Անտառները շարժվում են», «Հրաբուխի վրա», Ա. Գուլպանի «Յառում», Տ. Հախումյանի «Հայրենիքի զավակը», Գ. Յաղչյանի «Պոյա» և այլ պիեսներ: Հիշտ է, Գ.Սունդուկյանի և Ա. Մռավյանի անվան թատրոններում դրանց բեմադրությունները ցանկալի հաջողություն չունեցան, սակայն հարթեցին այն ճանապարհը, որ արդյունաբեր եղավ այդ ժամանակահատվածի դրամատուրգիայի համար:

Ինչպես գրականության մյուս բնագավառներում, դրամատուրգիայի ապագան եղավ ևս հնչեց Ն.Զարյանի խոսքը: 1941թ. նոյեմբերի 7-ին կայացավ նրա «Լրեժ» չափածո դրամայի առաջին ներկայացումը: Բեմադրիչը տաղանդավոր ռեժիսոր Վարդան Աճեմյանն էր: Թատերադերձ Բ. Հարությունյանը գրում է. «Բեմադրիչ Վ.Աճեմյանը ուժեղացրել էր այդ ստեղծագործության հայրենասիրական հնչողությունը»:[1]

Բեմադրող ռեժիսորի մոտեցումը հասկանալի է: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, որ գրականության և արվեստի բոլոր տեսակներով և ձևերով պետք էր քաղաքացիների վրա ներգործել զաղափարապես: Ն.Զարյանի պոեզիան հազցված էր քաղաքացիական պայթյունով,

* Աստղանիշով նշված բոլոր տշխատանքները գեղուցվել են «Երիտասարդ գիտնականների II գիտնաժողովում»: Մոսկվանկերտ, ապրիլ, 2007թ.:

գաղափարական նպատակասլացությամբ, այդպիսին էր նաև «Վրեժ» դրաման: Անհրաժեշտ է նշել, որ այդ շրջանում Սոնդուկյանի անվան թատրոնը խաղացանկի մեջ մտցրել է Սիմոնովի «Ռուս մարդիկ», Լ. Լենոմի «Արշավանք», Ա. Կորնելյուկի «Բազմամասն ալիսաները»: Ռուս հեղինակներին հաջողվել էր նշված դրամաներում ստեղծել ինքնուրույն կերպարներ՝ օժտված գաղափարական ներգործության ազդեցիկ ուժով: Վերոնշյալ ալիսան գաղափարական հազեցվածության և գեղարվեստական առանձնահատկությունների հիմք վրա գրականագետը ընդգծել է. «Բնութագրականն այն է, որ իրենց նախահիմքում պահպանելով ժանրային խիստ որոշակիությունը, պատերազմական տարիքի դրամատուրգիան դրա հետ մեկտեղ իր վրա կրել է գեղարվեստական տարբեր ազդեցությունը՝ հարստանալով գրական տարբեր տարրերով: Դրամատիկական լավագույն ներկերում կրթող հրապարակախոսությունը միախառնվել է ոգևորող քնարականությանը: Էպիկական լայն անդրադարձերը՝ խոր և նորը հոգեբանությամբ, առօրեական կենցաղային պատկերներով, բարձր ողբերգությամբ: Բայց նրանցում գլխավոր անփոփոխ հանդես է եկել հերոսական նախադրյալը, որի մեջ բացահայտվել է սովետական մարդու հոգեբանական վեժությունը, նրա անկոտրում քաջությունը սոցիալիստական հայրենիքի համար սրբապաշտարարում և միաժամանակ հասնելով համաժողովրդական խիզախության աննախադեպ չափերի: [2] Նշված առանձնահատկությունների հիման վրա էլ պետք է վերաարժեքալորել Ջալյանի «Վրեժ» դրաման: Պիեսն առաջին անգամ տպագրվել է «Մովսեսյան գրականություն և արվեստ» ամսագրի 1941 թ. 9-12-րդ համարներում: Այն անմիջապես արժանացել է ակնաավոր մոտափոխականների ուշադրությանը: Վարպետը գրել է. «Այդ ալիսա պատերազմի յուրատեսակ խոսացումն է, սինթեզը, մի կողմից ֆաշիստների գազանաբար կերպարը, բռնությունների և կոդոպուտի, նրանց դաժան քաղաքականության, մյուս կողմից մեր զինվորների խիզախության, գաղափարական կայունության և համզված հայրենասիրության»: [3]

Ն. Ջալյանը պիեսում նկարագրում է սովետական ռազմագեղիների՝ լեյտենանտ Վառլո Գերասիմովի, սերժանտ Մուշեղ Արամյանի, բոլորույր Լարիսա Լիֆշիցի անձնուրույն հայրենասիրությունը: Հիտլերականների թիկունքում նրանք հանդես են գալիս որպես ժողովրդական վրիժառուներ, որի հետևանքով գերի են վերցվում և հարցաքննվում ֆաշիստական զինվորների կողմից: Եվ այնքանով, որքանով սովետական քաջազունները բնավորության գծերը բացահայտվում են հարցաքննության ժամանակ, գերելիքում է հրապարակախոսությունը, որի արդյունքում զգացվում է սխեմատիզմը:

Կառուցվածքով «Վրեժ» հերոսական դրամա է: Խորհրդային տարիներին նման գործեր քիչ չեն ստեղծվել: Բաղադրացիական պատերազմի մասին գրված գործերից հայտնի են Ն. Պոզդոնիի «Հրացանավոր մարդը», Վ. Իվանովի «Ջրահագնաց «14-69», Լ. Սալինի «Ինտերվենցիա», Կ. Տրենկի «Լուրջով Յարովայա», Բ. Լավրենսի «Բակում» և այլ դրամաներ: Հերոսական դրամայի կարիքն զգացվեց նաև հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից: Հենց այդ հրամայականի ծնունդ հանդիսացավ Ն. Ջալյանի «Վրեժ»-ը, որի մեջ ակադեմ է էպիկականի և լիրիկականի տարրերը: Դրամայի հիմքում կոնֆլիկտը 2 հալադիր ուժերի սովետական ռազմիկների և ֆաշիստական հրոսակների միջև: Ջալյանը ձգտել է ցույց տալ հերոսների թե՛ չափաքայացրին հարապատ մնալը, թե՛ անսասան բնավորությունը: Այստեղից էլ պիեսի մեջ ընդգծված պատմողական հրապարակախոսական տարրերը, որ, անշուշտ հեռու են դրամային ներկայացվող գեղարվեստական առանձնահատկություններից: Այդ մասին անվանի գրականագետ Ս. Աղաբաբյանը գրել է. «Վրեժ» պիեսում երկու սկզբունքների բախումը ցույց տալու համար Ջալյանը հենց սկզբից իրեն դրել է անհարմար դրության մեջ՝ տեսարանների մեծ մասը կառուցելով գերիների հարցաքննության փաստի վրա, դրանով իսկ հերոսներին զրկելով գործելու, իրենց անհատականությունը բացահայտելու հնարավորությունից: Եվ ահա մարդկային կենդանի բնավորությունների փոխարեն մեջտեղ են բաշխվել «որոշ» տենդենցի արտահայտիչներ, անհատների փոխարեն բախման մեջ են մտնում սկզբունքները»: [4]

Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ թեկուզ պիեսում կերպարները գործողությունների ընթացքում չեն դրսևորում իրենց, այնուամենայնիվ նրանք իրականում հերթափոխության կրողներ են:

Հետաքրքիր ժամանակակա՛ն գունավորումներ ունեն Լարիսան և Մուշեղը, որոնք սահման աչքերին նայում են անվախ և արտահայտվում են իրենց անքիժ սիրո մասին: Գերասիմողը ցուցադրում է իր հնարամտությունը՝ թշնամու՛ն ծուղակի մեջ գցելու նպատակով, հաջող է պատկերված ֆաշիստ գնդապետ Շրեդերի կերպարը իր մարդասպանությամբ, խորամանկությամբ: Իհարկե, դրամայում կան անհաջող կերպարներ, ֆաշիստ կապիտան Ջրանց Կոլսը:

Իր թերություններով հանդերձ, «Վրեժ»-ը ուշագրավ երևույթ էր: Դա առաջին հերոսական, հակաֆաշիստական պիեսն էր, հայ ժողովրդի հերոսական պայքարի առաջին լուրջ առձագանքը:

Պիեսի բեմադրությունը ունեցել է հաջողություն և ներկայացվել է հայկական մի շարք պետական թատրոններում: Երևանում հրատարակվող «Կոմունիստ» թերթը գրել է, որ խանդիսատեսները մեծ խանդավառությամբ են ընդունել «Վրեժ»-ի բեմադրությունը: [5] Իսկ ներկայացման մեջ լեյտենանտ Գերասիմովի դերակատար Գուրգեն Ջանիբեկյանը, որ հանդես է եկել նաև Արթիկի շրջանային թատրոնում, պատմում է, որ գյուղերում և շրջանային կենտրոններում հանդիսատեսները ևս խանդավառությամբ էին ընդունում բեմադրությունը: [6] Ներկայացման հաջողությունը մեծապես կախված էր Վ. Աճեմյանի հմտությունից: Ինչպես հաստատում է գրականագետը. «Վ. Աճեմյանը «Վրեժ» դրամայի բեմադրությունը կառուցել էր որպես բացահայտ հրապարակախոսական հանդիսախաղ, դրամատիկական պոեմի յուրաքանչյուր գործողությունից առաջ բեմ էին դուրս գալիս գիմնաստյորկաներ հագած զինարկմետական ասմունքի վարպետները (նրանց թվում էր հայ նշանավոր դերասանուհի Արուս Ոսկանյանը) և «դալիժներ» էին ուղղում պատերազմի թմայով գրված հեղինակի բանաստեղծությունները: Պիեսի բնաբանն ու սերժանտ Մուշեղ Արամյանի եզրափակիչ խոսքն էր «Գերմանիա» բանաստեղծության հետևյալ տողը. «Գերմանիա, ու՛ր ես գլորվում այդպես»: Ներկայացումն անցնում էր որպես Ն. Ջարյանի հակաֆաշիստական պոեզիայի յուրատեսակ թատերականացված երեկո»: [7]

«Վրեժ»պիեսի վերնագրով Ն. Ջարյանը 1942թ. տպագրել է ժողովածու. այդ առումով մեծանուն Մ. Մարյանը գրել է. «Ն. Ջարյանի պոեզիան կրթու է և կոչող»: «Վրեժ» խորագրով բանաստեղծությունների նոր զիբրը նվիրված է Հայրենական մեծ պատերազմին, որտեղ Ն.Ջարյանի ծայրը հնչում է որպես մեր Հայրենիքի քաղաքացու և բուցաշունչ հայրենասների ծայր»: [8]

«Վրեժ» դրամայի բեմադրության առթիվ քննադատական դիտողություններով հանդերձ իր դրական խոսքն է ասել նաև հայտնի գրականագետ Հ. Գյուլի-Քնյայանը: [9]

Գրականագետ Վ. Թերզիբաշյանը ընդգծել է. «Աճեմյանը կարողացել է հմտությամբ բեմականացնել այն, ստեղծելով դրամատիկական կոնֆլիկտը և աշխատելով հնարավոր լիահնչյունությամբ ընդգծել դրամատիկական պոեմի իդեական հագեցվածությունը»:

«Վրեժ»-ի ներկայացման հաջողությանը մեծապես նպաստել են Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասանները: Մուշեղի դերում հանդես է եկել Գ. Խաժակյանը, Լարիսայի դերը մարմնավորել է Ա. Արազյանը, կապիտան Կոլսինը՝ Դ. Մալյանը, գնդապետ Շրեդերինը՝ Ա. Ավետիսյանը: Գ. Գաբրիելյանը կատարել է Վիլի Բոշի դերը, իսկ Գ. Աֆրիկյանը՝ Շուլցի:

«Վրեժ»-ից հետո Ջարյանը գրել է «Այրող դիմակ» պիեսը, որտեղ նկարագրված է ֆաշիստական հրոսակների թիկունքում սովետական պարտիզանների պայքարը: Պիեսը կառուցվածքային առումով փոքր «Վրեժ»-ին, ուստի այդ բեմական կյանք չստացավ:

Իսկ «Ամենագազան» սատիրական պամֆլետը բեմադրվել է Երևանի տիկնիկային թատրոնում:

«Ամենագազան»-ի գործող անձերը կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են՝ առյուծը, վագրը, Նեզոսի արքա Կոկորդիոսը, Կապիկը, Բորենին և այլն: Կենդանիների

երկխոսության միջոցով պարզվում է, որ Հիտլերը գազանների մեջ ամենազազանն է, որ
կրկնում ոչ մեկը չի ուզում նրան իր վանդակում տեղ տալ:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո անցել են
տասնամյակներ: Դժվար է գերազնահատել այդ պատերազմում խորհրդային ժողովուրդների
այդ թվում նաև հայ ժողովրդի նվաճած հաղթանակի նշանակությունը մարդկության
գոյատևման ճանապարհին: Ահա հենց այս առումով էլ պետք է անդրադառնա
գրականության և արվեստի կատարած դերի վերազնահատմանը: Այս առարկայում
Ն.Զարյանը առաջինն էր, որին պարտավորում ենք հիշել և միաժամանակ նրախտիրի մեջ
զգացումը փոխանցել գալիք սերունդներին:

Ծանոթագրություն

1. Բ. Հայրությունյան, Հայ սով. թատրոնը 1917-1977, Եր., 1986, էջ 188:
2. История русской сов. литературы, 40-80-е годы, подр. А.И. Метченко, М., 1983г., стр. 44.
3. Ավ. Իսահակյան, Ն. Զարյանի գրական, հասարակական գործունեության մասին, 1942
26 հունվարի (Ն. Զարյանի արխիվից):
4. Ս. Աղաբաբյան, «Ն. Զարյան», Հայպետհրատ, 1954, էջ 167:
5. Տես «Коммунист» թերթի 1941, նոյեմբերի 16-ի համարը:
6. Տես «Սովետական Հայաստան», 1942, մարտի 6-ի համարը:
7. Ս. Դարոնյան, «Ն. Զարյան», Եր., 1982թ. էջ 222:
8. Զարյանի արխիվ:
9. Տես «Բնագիտական հատվածներ», Եր., 1955, էջ 279:

Գրականություն

1. Զարյան Ն. «Մարտակոչ», Եր., 1941:
2. Զարյան Ն. «Վրեժ» (բանաստեղծություններ և պիեսներ), Եր., 1942:
3. Զարյան Ն. «Ձայն հայրենական» Եր., 1943:
4. Զարյան Ն. «Ծիկացած հոգով», Եր., 1943:
5. Զարյան Ն. «Հիտլերը գոռաբարկում», Եր., 1944:
6. Զարյան Ն. «Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 2», Եր., 1962:
7. Աղաբաբյան Ս. «Նաիրի Զարյան», Եր., 1954:
8. Ասատրյան Աս., «Հայրենիքի պաշտպանություն թեման շքանշանակիր պոետ Ն. Զարյանի պոեզիայում», «Խորհրդային գրականություն» ամսագիր, 1938, N 8, 09:
9. Գյուլի-Քեվիլյան Հ., «Սովետական դրամատուրգիան Հայրենական պատերազմի
օրերին», «Սովետական գրականություն և արվեստ», 1943, N1:
10. Թերզիբաշյան Վ. «Ն. Զարյանի «Վրեժ» դրամատուրգիական պոեմը», «Գրական
թերթ», 1941, N 33:

ԱրՊՀ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն